ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՑ 27-Ը ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ և ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԼՈՆԴՈՆ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝**

Քրիստինե Ղալեչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (մայրաքաղաք Լոնդոն) 2023թ. հոկտեմբերի 25-ից 27-ը

4. **Հրավիրող կողմը.**

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության և Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության դեսպանության հետ համագործակցություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն հայ-բրիտանական գործարար համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության և Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության դեսպանության հետ համագործակցությամբ իրականացված հայ-բրիտանական գործարար համաժողովին քննարկվել է տնտեսության՝ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտները, որոնց թվում են նաև ենթակառուցվածքների և լոգիստիկայի ոլորտները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովի ընթացքում ՆԱԿ ներկայացուցիչները հանդես են եկել Հայաստանի ներդրումային միջավայրը և գործարար հնարավորությունները ներկայացնող «Invest in Armenia» շնորհանդեսով: Այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ մասնակցել ենք նաև պանելային քննարկումներին և ներկայացրել Հայաստանում ենթակառուցվածքների

զարգացման ուղղված կառավարության քաղաքականությունը, խոշոր ենթակառուցվածքային ծրագրերը, դրանց մասնակցության պայմանները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության վերաբերյալ, որը կնպաստի միջազգային խոշոր ընկերությունների ներգրավածությունը տարբեր ռազմավարական և վերապատրաստման ծրագրերին, ինչպես նաև կծառայի որպես փորձի փոխանակման հարթակ:

Այցի շրջանակներում իրականացված հանդիպումները և քննարկումները Հայաստանի Հանրապետության համար մեծ հնարավորություններ կստեղծեն Հայաստանի ներդրումային միջավայրի (այդ թվում՝ ենթակառուցվածքների և լոգիստիկայի ոլորտների) և գործարար հնարավորությունների ընդլայնման համար:

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքներով, Հայաստանի համար առավել քան կարևոր է ընդլայնել համագործակցությունը ենթակառուցվածքների զարգացման և կլիմայի հարմարվողականության Բրիտանական միջազգային փորձագիտական կենտրոնի հետ՝ ոլորտում քաղաքականության արդիականացման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

01.11.2023թ.